ISSN 2953-805X

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6

NATIONAL ACADEMY OF SCIENCES, RA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

PROCEEDINGS OF THE INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

HAIA-6

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК, РА
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ТРУДЫ ИНСТИТУТА АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ХАИА-6

YEREVAN
IAE PUBLICATION 2024

ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО ИАЭ 2024

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱԻԱ - 6

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6

ԵՐԵՒԱՆ
ՀԱԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2024

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Published by decision of the Scientific Council of the Institute of Archaeology and Ethnography, NAS RA

Խմբագրական խորհուրդ

Գլխավոր խմբագիր՝ *Արսեն Բոբոխյան*

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ *Տորք Դալալյան*

Խմբագրակազմ՝ *Լևոն Աբրահամյան, Պավել Ավետիսյան, Աստղիկ Բաբաջանյան, Ռուբեն Բադալյան, Միհրան Գալստյան, Ջուստո Թրաինա, Թեո վան Լինթ, Լորի Խաչատրուրեան, Ռուբեն Կարապետյան, Թամար Հայրապետյան, Արսեն Հարությունյան, Սուրեն Հոբոսյան, Դիանա Միրիջանյան, Ադամ Սմիթ, Պատրիկ Տօնապետեան, Պիտեր Քաուի*

Editorial Board

Editor-in-Cief: *Arsen Bobokhyan*

Vice-Editor-in-Chief: *Tork Dalalyan*

Editorial Stuff: *Levon Abrahamian, Pavel Avetisyan, Astghik Babajanyan, Ruben Badalyan, Peter Cowe, Patrick Donabédian, Mihran Galstyan, Arsen Harutyunyan, Tamar Hayrapetyan, Suren Hobosyan, Ruben Karapetyan, Lori Khatchadourian, Theo van Lint, Diana Mirijanyan, Adam Smith, Giusto Traina*

ՀԱԻԱ պարբերականի հերթական՝ 6-րդ հատորն ընդգրկում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Երևանի պետական համալսարանի, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի, Սիրակուզայի համալսարանի (ԱՄՆ) հետազոտողների հոդվածները, որոնց նախնական տարբերակները որպես զեկուցում ներկայացվել են ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ 2023 թ. հոկտեմբերի 18-19-ին ՀԱԻ Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի կազմակերպած «Համաշխարհայնացումը և սոցիալ-մշակութային արդի գործընթացները Հայաստանում. հիմնախնդիրներ և հեռանկարներ» գիտաժողովին: Հատորը եզրափակվում է մեկ հաղորդմամբ և Բեյրութում հրատարակվող Հայկազեան հայագիտական հանդեսի երկու համարների գրախոսությամբ:

ISSN 2953-805X

DOI:10.54503/2953-805X

© ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՈՒՄ ԵՒ ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ 7

Միհրան Գալստյան
Մնա՞լ, թե՞ գնալ. Հայաստանից հնարավոր նոր արտագաղթի սոցիալ-մշակութային հիմնախնդրի շուրջ 8

Լուսինե Տանաջյան
Հայ և այլազգի ներգաղթյալների ինտեգրումը Հայաստանում. համեմատական կողմեր 24

Սոնա Ներսիսյան
Հայաստանը ռուսաստանցի ներգաղթյալների ընկալումներում 37

Սյուզաննա Բարսեղյան
Հայաստանի հայրենադարձության քաղաքականության հիմնահարցերն արդի իրողությունների համատեքստում 49

II. ՆԵՐԳԱՂԹՅԱԼՆԵՐ ԵՒ ՏԵՂԱՀԱՆՎԱԾՆԵՐ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼԱՆԴՇԱՖՏԸ 65

Գայանե Հակոբյան
«Հալեպի շուկան»՝ որպես սիրիահայերի ձեռնարկատիրական գործունեության միկրոմոդել 66

Գարիկ Աթանեսյան
Աուտենտիկության խոսույթը և բեմադրված ժառանգությունը հետխորհրդային Հայաստանի զբոսաշրջային պրակտիկաներում 78

Արմինե Տիգրանյան
Ադրբեջանի կողմից բռնի տեղահանված արցախահայերի մշակութային կյանքին մասնակցության սահմանափակումները (Արցախի Հադրութի շրջանի օրինակով) 89

III. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՈՒՄ 113

Ռոբերտ Օհանջանյան
Պրոֆեսիոնալ մշակութային արժեքների փոփոխման որոշ հարցեր ՀՀ-ում գլոբալիզացիայի համատեքստում 114

Լուսինե Անգեղուշ
Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականությունն արդի շրջանում 124

Մակիչ Վարդանյան
Գլոբալացման խոսույթը հայաստանյան զլմ-ներում. կրթության հիմնախնդրի համատեքստը 139

IV. ԱՎԱՆԴԱԿԱՆՆ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆԸ
ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐՈՒՄ 157

Սվետլանա Պողոսյան
Հազուստը որպես խորհրդահայ և ետխորհրդահայ հասարակության սոցիալ-հոգեբանական ցուցիչ 158

Հասմիկ Աբրահամյան
Ռոման Հովսեփյան
Ուտեստի էթնոմշակութային դերը միգրացիայի շրջապտույտում (նախնական հետազոտություն՝ ըստ Սյունիքից գրառված նյութերի) 174

V. ՍՓՅՈՒՌՔՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ 189

Ռոբերտ Կարապետյան
Սփյուռքի համայնքային կառույցներում հայերի ներգրավվածության խնդիրը 190

Նարե Գալստյան
Հայրենիքի մասին պատկերացումները Լոս-Անջելեսի հայկական համայնքում 204

Նելլի Խաչատրյան
Սալվինե Մարկոսյան
Մարիամ Հարությունյան
Էթնոկրոնական վերափոխարկումը համաշխարհայնացման համատեքստում (հնդկական, թուրքական և իռլանդական սփյուռքների փորձի հիման վրա) 218

VI. ՀԱՂՈՐԴՈՒՄ 237

Հռիփսիմե Ասատրյան
Մանկական բանահյուսության որոշ արդի դրսևորումներ 238

VII. ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 247

Հայկազեան հայագիտական հանդէսի 2022 տարուան զոյգ գիրքերը 248

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 263

I

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՈՒՄ ԵՎ ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

DOI: 10.54503/2953-805X-2024.6-8

Միհրան Գալստյան, *պ.գ.դ., դոցենտ*
ՀԱԻ

ՄՆԱ՞Լ, ԹԵ՞Ղ ԳՆԱԼ. ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ՀՆԱՐԱՎՈՐ ՆՈՐ ԱՐՏԱԳԱՂԹԻ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ

Հայաստանից արտագաղթի խնդիրը՝ պատճառների և անվտանգային, տնտեսական, ժողովրդագրական ազդեցության տեսանկյունից, ակադեմիական գրականության մեջ լավ ուսումնասիրված թեմաներից է: Այդ հիմնախնդիրը ինչպես Հայաստանի, այնպես էլ արևմտյան հետազոտողները հիմնականում քննարկում են ուղարկող և ընդունող երկրներում գոյություն ունեցող «պահպանող», «վանող» և «ձգող» տնտեսական գործոնների տեսության շրջանակում: Սույն հոդվածում կարևորում ենք արտագաղթ առաջացնող սոցիալ-մշակութային խնդրի քննարկումը: Հոդվածը հնարավորություն կտա փոխելու և վերանայելու մինչ այդ գոյություն ունեցող մոտեցումները, քանի որ նոր արտագաղթի բացահայտման և հետագա կանխատեսման նպատակով կարևոր տեղ կհատկացվի այդ երևույթն առաջացնող սոցիալ-մշակութային և հոգեբանական գործոնների քննարկմանը: Այստեղ հղում ենք անելու արևմտյան սոցիոլոգիայում՝ միգրացիա ծնող մշակութային տեսություններին: Այդ առումով կարևորում ենք կուտակային պատճառականության խնդիրը, ըստ որի՝ միգրացիայի յուրաքանչյուր դեպք մեծացնում է հավանականությունը նոր միգրանտների ներգրավման և համայնքում միգրացիայի ավանդույթների ձևավորման:

Մյուս կարևոր մոտեցումը՝ արտերկրում ձևավորված սոցիալական ցանցի տեսությունն է, որ խթանում է ծագման երկրներից բնակչության տարածքային տեղաշարժերը: Այդ մոտեցումների շրջանակում հետազոտության արդյունքների հիման վրա նոր հավանական արտագաղթի պատճառների տեսակարար կշռում կվերլուծվեն հարցման մասնակիցների՝ Հայաստանում ստեղծված իրավական, անվտանգային, ինքնաիրացման, կրթական, սոցիալական ինստիտուտներից բավարարվածության, ապագայի նկատմամբ ունեցած դիրքորոշումները: «Ներկայում մտադի՞ր եք մեկնելու արտերկիր՝ բնակության նպատակով» հարցին Հայաստանից մեկնել ցանկացողների պատասխանները կհամադրվեն նրանց սեռի, տարիքի, կրթության, լեզվական իմացության, նյութական բավարարվածության, ընտանեկան կարգավիճակի, սոցիալական ցանցի և նախընտրելի երկրի, ընտանիքով կամ մենակ արտագաղթելու, մեկնելու հավանական ժամկետների, բնակավայրի տիպի (քաղաք, գյուղ) տվյալների հետ: Այդ վերլուծությունը հնարավորություն կտա որոշելու հնարավոր միգրանտներին և Հայաստանից հեռանալու ցանկություն ունեցող հավանական խմբերին:

Հոդվածը հիմնվում է 2021 թ. Հայաստանի բոլոր մարզերի 20 քաղաքային և 37 գյուղական բնակավայրերի 639 տնային տնտեսությունների շրջանում անցկացված հարցումների վրա, որոնք տեղեկատվություն են տվել արտերկրում հաստատված 1259 միգրանտների մասին: Հարցումներ են իրականացվել նաև 29 փորձագետների շրջանում: Համեմատական բովանդակային նյութեր ստանալու նպատակով 2023 թ. իրականացվել է նաև 13 խորացված հարցազրույց:

Հիմնաբառեր՝ էմիգրացիա, սոցիալ-մշակութային պատճառներ, սեռ, տարիք, կրթություն, բավարարվածություն:

Ներածություն

Անկախությունից հետո Հայաստանից արտագաղթն ընդունել է մեծ ծավալներ, այն ներառում է բնակչության սեռատարիքային, կրթական, սոցիալական տարբեր շերտեր՝ հասարակության սոցիալ-տնտեսական ոլորտում առաջ բերելով մի շարք լուրջ հիմնախնդիրներ: Փորձագիտական գնահատման և ընտրանքային հետազոտության արդյունքներով՝ 1988-2019 թթ. Հայաստանից արտաքին միգրացիոն բացասական մնացորդի մեծությունը կազմել է շուրջ 1600-1700 հազար մարդ[1]: Այդ խնդիրներով զբաղվող պետական և հասարակական կազմակերպությունները, ինչպես նաև անհատ հետազոտողները, Հայաստանից արտագաղթի խնդիրը վերլուծելիս, հիմնականում կենտրոնանում են դրա պատճառների և ունեցած սոցիալ-տնտեսական ու ժողովրդագրական հետևանքների վրա: Հետազոտողների մեծ մասը այդ խնդիրը քննարկում է Հայաստանում առկա վանող (գործազրկությունը, եկամուտների ցածր մակարդակը, աղքատությունը, պատերազմ, անվտանգային խնդիրներ ևն) և ընդունող երկրներում ձգող (աշխատանք, բարձր եկամուտներ, բարձր կենսամակարդակ, անվտանգություն, իրավական պաշտպանվածություն, ապագայի նկատմամբ վստահություն ևն) գործոնների տեսանկյունից, որոնք որոշում են ուղարկող և ընդունող երկրներում միգրանտների ժամանումը և մեկնումը[2]: Այս հոդվածում մեր հետազոտության արդյունքների հիման վրա կենտրոնանալու ենք Հայաստանից նոր հնարավոր արտագաղթի խնդրի բարձրացման վրա՝ հաշվի առնելով ոչ միայն միգրացիա առաջացնող տնտեսական, այլև սոցիալ-մշակութային գործոնի դերը: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս ոչ միայն բացահայտելու այդ գործընթացում ընդգրկված «տնտեսական մարդու», այլև մասնակիցների սոցիալական պարամետրերի վրա հիմնված միգրացիոն կողմնորոշումները: Տվյալ գաղափարը զարգացնելու համար վերանայում ենք արտագաղթի պատճառների վերաբերյալ տեսական գրականությունը. հիմնվում ենք միգրացիայի վերաբերյալ արևմուտքում լայն տարածում ստացած սոցիոլոգիական և մշակութաբանական տեսությունների վրա:

Հոդվածում նպատակ է դրված՝ հետազոտության արդյունքներով ձեռք բերված տվյալների հիման վրա ուրվագծել և կանխատեսել Հայաստանից նոր հնարավոր արտագաղթի միտումները: Հետազոտության օբյեկտը Հայաստանի այն քաղաքացիներն են, որոնց ընտանիքի անդամները արտագաղթել և մշտական բնակություն են հաստատել արտերկրում: Հետազոտության դիտարկման միավոր են ընտրվել Հայաստանում բնակվող այն ընտանիքները, որոնց անդամները արտագաղթել են Հայաստանից:

Հետազոտության խնդիրներն են՝

Վերլուծել նոր հավանական արտագաղթի պատճառները և դրանում սոցիալ-մշակութային և հոգեբանական գործոնի դերը;

1 Եգանյան 2020:

2 Everett 1966.

Արտագաղթել ցանկացողների սեռատարիքային, սոցիալ-մասնագիտական կազմը և զբաղվածության կարգավիճակը;

Արտագաղթի ուղղությունները և մեկնման երկրների ընտրության պատճառները:

Մեթոդաբանություն

Կիրառվել է հարցաթերթային հարցման մեթոդը: Քանակական հարցումներն անցկացվել են 2021 թ. Հայաստանի 20 քաղաքային, 37 գյուղական բնակավայրերում և Երևան քաղաքում՝ 639 ընտանիքում: Այդ ընտանիքներից հավաքված տեղեկատվությունը վերաբերում է 1259 անձանց, որոնք արտագաղթել և բնակություն են հաստատել արտերկրում: Այս զանգվածից հետազոտության նյութերը վերաբերում են այն անձանց, ովքեր 2023 թ. և դրանից հետո մտադիր են մեկնելու արտերկիր՝ մշտական բնակություն հաստատելու (16.9%)[3]:

Միգրացիայի վերաբերյալ տեսական մոտեցումներ

Արտագաղթի պատճառների վերլուծության համար կարևորել ենք սոցիալական ցանցերի մասին տեսությունը: *Ցանց* հասկացության մեկնաբանության համար հիմնվել ենք արևմտյան միգրացիոն տեսություններում լայն տարածում ստացած՝ Դուգլաս Մեսեյնի աշխատությունների վրա: Նա միգրացիոն ցանցը սահմանում է որպես «*միջանձնային հարաբերությունների ամբողջություն՝ ձևավորված ազգակցական, ընկերական կապերի, ինչպես նաև ընդհանուր սոցիալական ծագման հիմքի վրա, որոնք կապում են միգրանտներ, նախկին միգրանտների և ոչ միգրանտների խմբերին ծագման և նպատակակետ երկրներում*»[4]:

Ինչ վերաբերում է ցանցի *էթնիկություն* երևույթին, ապա ի նկատի ունենք միգրանտների էթնիկ պատկանելությունը, որն այլէթնիկ միջավայրում ապահովում է համայնքի անդամների ներքին հաղորդակցությունը և համախմբումը՝ ուրվագծելով սահմաններ «յուրայինների» և «օտարների» միջև: *Էթնիկություն* հասկացության բնութագրության համար կարևորում ենք Ա. Սմիթի[5] մոտեցումը: Էթնիկ ցանցի գոյությունը նպաստում և արագացնում է ծագման երկրներից բնակչության տարածքային տեղաշարժերը, քանի որ դրանք բնութագրվում են որպես «միգրացիայի վստահության ցանցեր»՝ հիմնված ծագման և բնակության վայրի միջև աջակցության, վստահության և նյութական միջոցների փոխանակման վրա: Այդ հիմնախնդիրներով զբաղվող հետազոտողների մեծ մասը համաձայն է այն տեսակետին, որ միգրացիոն ցանցերը տեղում մնացած անհատներին կապում են դրսում գտնվող հարազատների հետ, ինչը դառնում է շարունակական միգրացիայի կարևոր գործոն:

3 Հոդվածը ներառում է 2023 թ. հոկտեմբերի 18-19-ը տեղի ունեցած «Համաշխարհայնացումը և սոցիալ-մշակութային արդի գործընթացները Հայաստանում. հիմնախնդիրներ և հեռանկարներ» միջազգային գիտաժողովում ներկայացված նյութերը:

4 Massey et al. 1993.

5 Smith 1986, 32.

Ցանցային միգրացիան սովորաբար սկսվում է ընտանիքի անդամից և հետագայում ընդլայնվում է՝ ներգրավելով միևնույն բնակավայրից տարբեր մարդկանց խմբեր[6]: Ա. Պորտեսը նշում է, որ «*միգրացիոն գործընթացը հեշտացնելու նպատակով նույնէթնիկ, կրոնական և տարածքային խմբերի անդամները միմյանց տրամադրում են ռեսուրսներ*»[7]: Սոցիալական ցանցի դերը կարևոր է նաև միգրանտների համար «սոցիալական կապիտալի» վերածվելու տեսանկյունից[8], որով նրանք, ընդունող երկրում հիմնվելով նախկին միգրանտների կապերի վրա, կառուցում են նոր հարաբերություններ և մուտք գործում ֆորմալ և ոչ-ֆորմալ ինստիտուցիոնալ կառույցներ: Որոշ հետազոտողներ սոցիալական ցանցերի դերը կարևորում են միգրացիայի ավանդույթների ձևավորման տեսանկյունից, քանի որ այդ երևույթը դառնում է համայնքային արժեքների մի մասը: Ի տարբերություն էմիգրանտ ունեցող ընտանիքների, որոնց անդամները դրսից կատարված ներդրումներով ապահովում են որոշակի բարեկեցություն, համայնքի մյուս ընտանիքների մեջ, որոնք չունեն միգրանտներ, աճում է որոշ բարիքներից հարաբերականորեն զուրկ լինելու զգացումը՝ դրդելով նրանց մտածելու էմիգրացիայի մասին: Սոցիալական ցանցերը խթանում են նրանց մեջ ձևավորված մտադրության իրագործումը:

Արտերկիր բնակության մեկնելու մտադրությունները և դրա պատճառները

Մեր այն հարցին, թե «Ներկայում մտադի՞ր եք մեկնելու արտերկիր՝ բնակվելու նպատակով» մասնակիցների 16.9%-ը տվել է դրական պատասխան և ցանկություն է հայտնել մեկնելու Հայաստանից:

Աղյուսակ 1.
Հայաստանից արտագաղթի մտադրություն ունեցողների թիվը (%)

պատասխան	**%**
այո	16.9
ոչ	79.2
դժվ. է պատ.	3.9

Մեր հետազոտությունը ցույց տվեց, որ արտագաղթի համար շարունակում է կարևոր պատճառ լինել տնտեսական գործոնը՝ Հայաստանում բավարար կենսամակարդակ ապահովելու համար միջոցներ վաստակելու անհնարինությունը, աշխատանքի բացակայությունը, որին կողմ է արտահայտվել հարցման մասնակիցների 37.6%-ը: Ի հավելումն դրա՝ Հայաստանից առաջիկա հնարավոր արտագաղթի համար հարցման մասնակիցների 26.4%-ը որպես «վանող գործոններ» նշել է հանրապետությունում առկա ներքին խնդիրները, քաղաքական անկայուն իրավիճակը, պատերազմի վտանգը, զարգացման հեռանկարների բացակայությունը, սոցիալական, բարոյահոգեբանական մթնոլորտը:

6 Fawcett 1989.

7 Portes 1998.

8 Bourdieu 1985.

Նրանց 21.1%-ը որպես Հայաստանից արտագաղթի կարևոր պատճառ նշել է ընտանիքի միավորման խնդիրը: Սրանք այն կիսված ընտանիքներն են, որոնց անդամները նախկինում արտագաղթել և բնակություն են հաստատել արտերկրում: Հարցման մասնակիցների մի փոքր մասն էլ առաջիկայում արտերկիր մեկնելու համար նշել է ամուսնությունը:

Աղյուսակ 2.
Հայաստանից արտագաղթի պատճառները (%)

պատճառները	**%**
բավարար կենսամակարդակ ապահովելու համար միջոցներ վաստակելու անհնարինությունը	24.1
ընտանիքի միավորումը	21.1
Հայաստանում աշխատանքի բացակայությունը	13.5
ՀՀ քաղաքական անկայուն իրավիճակի պատճառով	12.0
պատերազմի վտանգը	8.3
բարեկեցիկ կյանքի ակնկալիքները	6.0
արտերկրում աշխատանք ունենալու հնարավորությունները	4.5
երկրի/բնակավայրի զարգացման հեռանկարների բացակայությունը	3.8
ամուսնության նպատակով	2.3
սոցիալական, բարոյահոգեբանական մթնոլորտը	2.3
կրթության, մասնագիտական աճի նպատակով	1.5
դժվարանում եմ պատասխանել	0.8
ԸՆԴԱՄԵՆԸ	100.0

Մյուս պատճառները, որոնք ներկայացված են աղյուսակ 2-ում, վերաբերում են միգրանտների համար արտերկրում առկա «ձգող գործոններին», որտեղ, ըստ նրանց, կուտակված են մեծ թվով հնարավորություններ: Հարցման մասնակիցների 6,0%-ը դրանց թվում նշել է արտերկրում բարեկեցիկ կյանքով ապրելու ակնկալիքը, 4,5%-ը՝ աշխատանք գտնելու, 1,5%-ը՝ կրթության, մասնագիտական աճի հնարավորությունը:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ հնարավոր նոր արտագաղթի համար Հայաստանում գոյություն ունեցող վանող գործոններն ավելի մեծ տեսակարար կշիռ ունեն ընդհանուր պատճառների մեջ, քան արտերկրի ձգող գործոնները:

Հետազոտությունը հնարավորություն տվեց պարզելու նաև միգրանտների կողմից առաջիկա հնարավոր արտագաղթի նախընտրելի երկրների աշխարհագրությունը, որում շարունակում է բարձր տոկոս կազմել Ռուսաստանի Դաշնությունը նախընտրողների թիվը (46.5%): Դրան հաջորդում են ԱՄՆ-ն և Կանադան (28.3%), ապա եվրոպական երկրները (14.1%): Հայաստանից Ռուսաստանի Դաշնություն միգրացիային որպես բարձր ցուցանիշ ունեցող երկիր փաստում են նաև մյուս հետազոտության արդյունքները[9]:

9 Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, ՀՀ վիճակագրական կոմիտե, 2023 https://www.armstat.am/file/article/demog_2023_7.pdf

Աղյուսակ 3.
Արտագաղթի հավանական երկրները (%)

երկրները	**%**
Ռուսաստան	46.5
ԱՊՀ երկրներ	3.0
Եվրոպական երկրներ	14.1
ԱՄՆ և Կանադա	28.3
այլ երկրներ	1.0
դժվ. է պատ.	7.1
ԸՆԴԱՄԵՆԸ	100.0

Արտագաղթի ուղղության ընտրությունը մեծավ մասամբ պայմանավորված է տվյալ երկրներում բնակվող ընտանիքի անդամների և հարազատների առկայությամբ. դա էլ պայմաններ է ստեղծում՝ ի կատար ածելով երկրի տնտեսական և քաղաքական իրավիճակից դժգոհ մարդկանց արտագաղթելու մտադրությունները:

Հարցվածների 46.5%-ը արտագաղթի հավանական ժամկետներ է նշել և պլանավորել է հանրապետությունից մեկնել մինչև 2023 թ., իսկ 20.2%-ը՝ 2023թ. և հետո: Մեկ-երրորդից ավելին դժվարացել է պատասխանել այդ հարցին:

Աղյուսակ 4.
Հավանական արտագաղթի ժամկետները (%)

ժամկետները	**%**
մինչև 2023 թ.	46.5
2023 թ. հետո	20.2
դժվ. է պատ.	33.3
ԸՆԴԱՄԵՆԸ	100.0

Արտերկրի էթնիկ ցանցի դերը հավանական արտագաղթի երկրների ընտրության հարցում

Դուգլաս Մեսեյնը էմիգրացիայի խնդիրը կարևորել է ոչ այնքան երկրների միջև վարձատրությունների տարբերությունների, որքան աշխարհում ստեղծված միգրացիոն ցանցերի առկայության տեսանկյունից: Դրա միջոցով միգրանտները մեկնման համար հակված են ընտրելու այն երկրները, որտեղ ունեն արդեն իսկ ձևավորված ազգակիցների, բարեկամների, ընկերների ցանց[10]: Սփյուռքի առկայությունը միգրացիոն ցանցի միջոցով արագացնում և հնարավորություններ է ստեղծում ծագման երկրներից նրանց ընտանիքի անդամների, հարազատների, ընկերների արտագաղթի խթանման համար: Այն նպաստում է Հայաստանից էմիգրացիայի գործընթացի աստիճանական ընդլայնմանը և նոր ընտանիքների և անհատների ներգրավմանը: Այսինքն՝

10 Massey et al. 1993.

արտերկիր էթնիկ ցանցի կողմից մարդկային և նյութական ռեսուրսների տրամադրումն իր ազդեցությունն է թողնում երկրի ընտրության պատճառների վրա: Այդ մասին են փաստում նաև «Ինչո՞ւ եք ցանկանում մեկնել հատկապես այդ երկիրը» հարցի՝ հարցման մասնակիցների պատասխանները, որոնց կեսից ավելին՝ 51.2%-ը, նշել է այդ երկրներում ընտանիքի անդամների, հարազատների, իսկ մի փոքր մասը՝ 2.5%-ը՝ ընկերների, ծանոթների առկայությունը: Մնացած պատասխաններն առնչվում են նպատակակետ երկրներում գոյություն ունեցող սոցիալ-տնտեսական բարենպաստ պայմանների՝ աշխատանք գտնելու, երկրի զարգացվածության, բարձր վարձատրության հնարավորության, երկիր մուտք գործելու հասանելիության, նախկինում այդ երկրում ունեցած աշխատանքային փորձի, անվտանգ լինելու, լեզվի իմացության գործոններին (աղ. 4):

Աղյուսակ 5.
Հնարավոր արտագաղթի համար երկրի ընտրության գործոնները (%)

գործոնները	**%**
ընտանիքի անդամների, հարազատների առկայությունը	51.2
աշխատանքի հնարավորությունը/առաջարկը	14.9
երկրի զարգացվածությունը	10.7
բարձր վարձատրությունը	6.6
երկիր մուտք գործելու հասանելիությունը	3.3
նախկինում այդ երկրում աշխատելը, հանգիստը	3.3
ընկերների, ծանոթների առկայությունը	2.5
անվտանգ է	1.7
լեզվի իմացությունը	0.8
դժվարանում եմ պատասխանել	5.0
ԸՆԴԱՄԵՆԸ	100.0

Արտերկրում էթնիկ ցանցի առկայությունը կանխորոշում է Հայաստանից արտագաղթողների կողմից երկրների նախապատվությունը, քանի որ ցանցը երբեմն աջակցում է նրանց տեղափոխման ծախսերի կրճատման, արտերկրում մարդկային և ֆինանսական ռեսուրսների տրամադրման, անվտանգային խնդիրների և ադապտացիայի հարցերում: Ըստ հետազոտության արդյունքների՝ արտագաղթի մտադրություն ունեցողների միգրացիոն ուղղությունները հիմնականում համընկնում են արտերկրում նրանց հարազատների բնակության երկրներին: Այսպես, Ռուսաստանում ընտանիքի անդամ/հարազատ և արտագաղթելու մտադրություն ունեցող հարցվողների 74.6%-ը արտագաղթի նախընտրելի երկիր նշել է Ռուսաստանը: Նույն օրինաչափությունն է դիտարկվել նաև եվրոպական երկրներ մեկնողների պարագայում: Սակայն միգրացիայի մասին որոշում կայացնող անձն ունենում է ոչ թե մեկ, այլ մի քանի ուղղության ընտրություն, որին աջակցող և ուղեկցող գործառույթ է կատարում էթնիկ ցանցը: Օրինակ՝ հարցվողների համապատասխանաբար 16.9% և 5.1%-ը, բացի Ռուսաստանից, ԱՄՆ-ն և եվրոպական երկրները ևս հավանական ուղղություն-

ներ են համարել: Նույն պատկերն է դիտարկվել նաև եվրոպական երկրներ ընտանիք անդամ/հարազատ ունենալու հանգամանքի դեպքում, սակայն նրանք չեն բացառում նաև ԱՄՆ մեկնելու տարբերակը: Ուշագրավ է ԱՄՆ-ի օրինակը. այստեղ ցանցն ավելի ձգող է և մեծ դեր ունի հավանական արտագաղթի ուղղության հարցում (86.7%):

Աղյուսակ 6.
Հնարավոր արտագաղթի ուղղությունը՝ ըստ էթնիկ ցանցի առկայության (%)

արտագաղթած ընտանիքի ուղղությունը	**երկրները**						
	Ռուսաստան	**ԱՊՀ երկրներ**	**Եվրոպական երկրներ**	**ԱՄՆ և Կանադա**	**այլ երկրներ**	**դժվ. եմ պատ.**	**ԸՆԴԱՄԵՆԸ**
Ռուսաստան	74.6	-	5.1	16.9	-	3.4	100.0
Եվրոպական երկրներ	-	-	68.8	12.5	-	18.8	100.0
ԱՄՆ և Կանադա	-	-	-	86.7	-	13.3	100.0

Հավանական արտագաղթողների սոցիալ-ժողովրդագրական տվյալները

Հետազոտության կարևոր խնդիրներից էր նաև պարզել, թե նրանք տարիքային ո՞ր խմբերին են պատկանում, ի՞նչ կրթական ռեսուրս է արտագաղթում և զբաղվածության ո՞ր ոլորտներից: Ըստ հետազոտության արդյունքների՝ արտագաղթել ցանկացողների գերակշիռ մեծամասնությունը՝ 71.7%-ը, կանայք են. նրանց մեկնելու պատճառները պայմանավորված են ընտանիքի միավորման խնդրով: Ինչ վերաբերում է տարիքային կազմին, ապա 44.4%-ը ակտիվ վերարտադրողական խմբում է՝ երիտասարդներ են, 38,4%-ը աշխատունակ է՝ 36-62 տարեկան: Նրանցից միայն 17,2%-ն է, որ 63 տ. և բարձր է, այսինքն՝ թոշակառու: Բերված ցուցանիշները խոսում են այն մասին, որ այդ գործընթացի իրականացման դեպքում այն իր բացասական ազդեցությունը կարող է թողնել Հայաստանի բնակչության ժողովրդագրական գործընթացների վատթարացման վրա. այդ մասին փաստում են նաև նախորդ տարիների հետազոտության արդյունքները[11]:

Աղյուսակ 7.
Հավանական արտագաղթողների սեռատարիքային կազմը (%)

սեռը		**տարիքը**			
արական	իգական	18-35	36-50	51-62	63 և բարձր
28.3	71.7	44.4	28.3	10.1	17.2

11 ՀՀ միգրացիոն իրավիճակի գնահատում՝ ընտրանքային հետազոտության միջոցով, Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան, Երևան, 2013, http://files4.webydo.com/45/452723/UploadedFiles/7926b382-53f6-4128-8dbb-cacc8e6a8ff9.pdf (հասանելի է՝ 06.07.2022):

Ըստ հետազոտության արդյունքների՝ արտագաղթի մտադրություն ունեցողների 54.5%-ն ունի բարձրագույն կրթություն. սա փաստում է նաև Հայաստանից ուղեղների հետագա արտահոսքի մասին: Մյուս կրթական մակարդակներում այդ ցուցանիշը գրեթե կրկնակի պակաս է (աղ. 8):

Աղյուսակ 8.
Հավանական արտագաղթողների կրթական մակարդակը (%)

կրթական մակարդակը	**%**
միջնակարգ և ցածր	22.3
միջին մասնագիտական	23.2
բարձրագույն և բարձր	54.5
ԸՆԴԱՄԵՆԸ	100.0

Արտագաղթի մտադրություն ունեցողների 30.2%-ը հասարակական գիտությունների մասնագետներ են, 18.2%-ը՝ հումանիտար գիտությունների և արվեստի ոլորտի: Այդ ցուցանիշները փաստում են այն մասին, որ նշված մասնագիտությունները հայաստանյան աշխատաշուկայում շարունակում են մնալ ոչ պահանջված, ինչն էլ մեծացնում է արտագաղթի հավանականությունը: Համեմատաբար մեծ զանգված են կազմում նաև միջին որակավորման մասնագետները՝ 15.2%: Արտագաղթի հակվածություն ունեցողների մեջ միայն 16.2%-ը մասնագիտություն չունի:

Աղյուսակ 9.
Հավանական արտագաղթողների մասնագիտական նկարագիրը (%)

մասնագիտությունը	**%**
հասարակական գիտությունների մասնագիտություններ (իրավագիտություն, մանկավարժություն, քաղաքագիտություն, սոցիոլոգիա ևն)	30.2
հումանիտար գիտությունների և արվեստի ոլորտի մասնագիտություններ (հոգեբանություն, բանասիրություն, արվեստ, սպորտ ևն)	18.2
միջին որակավորման մասնագիտություններ	15.2
սպասարկման ոլորտի մասնագիտություններ	7.1
ճարտարապետություն	5.1
բնական գիտությունների մասնագիտություններ (ֆիզիկա, մաթեմատիկա, կենսաքիմիա, ՏՏ ևն)	4.0
բժշկություն	3.0
այլ (ռազմագիտություն, ոստիկանություն)	1.0
մասնագիտություն չունեն	16.2
ԸՆԴԱՄԵՆԸ	100.0

Արտագաղթելու մտադրություն ունեցողների 40.4%-ը վարձու աշխատանք է կատարում, 14.1%-ը ինքնազբաղված է տարբեր ոլորտներում, 2.1%-ը ժամանակավոր աշխատող է, իսկ 4.0%-ը՝ ուսանող: Տնտեսապես պասիվ խմբի մեջ

ավելի մեծ զանգված են կազմում տնային տնտեսություն վարողները՝ 18.2%, ապա թոշակառուները՝ 13.1%:

Աղյուսակ 10.
Արտագաղթի մտադրություն ունեցողների զբաղվածության կարգավիճակը (%)

զբաղվածության կարգավիճակը	**%**
գործատու	0.0
ինքնազբաղված	14.1
վարձու աշխատանք	40.4
ժամանակավոր աշխատանք	2.1
տնային տնտեսություն վարող	18.2
գործազուրկ	8.1
ուսանող	4.0
թոշակառու	13.1
ԸՆԴԱՄԵՆԸ	100.0

Ինչ վերաբերում է Հայաստանից արտագաղթել ցանկացողների ընտանեկան կարգավիճակին, ապա նրանց 59.6%-ը ամուսնացած է, 25.3%-ը՝ չամուսնացած, 3.0%-ը՝ ամուսնալուծված, իսկ 12.1%-ը՝ այրի:

Աղյուսակ 11.
Արտագաղթի մտադրություն ունեցողների ընտանեկան կարգավիճակը (%)

ընտանեկան կարգավիճակը	**%**
չամուսնացած	25.3
ամուսնացած	59.6
ամուսնալուծված	3.0
այրի	12.1
ԸՆԴԱՄԵՆԸ	100.0

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ արտագաղթողների մեծ մասը (70.9%) մեկնելու է ընտանիքի անդամների՝ ամուսնու/կնոջ, երեխաների կամ ծնողների, եղբոր և քրոջ հետ, իսկ 28.2%-ը՝ մենակ:

Աղյուսակ 12.
Ո՞ւմ հետ են ծրագրում մեկնել հավանական արտագաղթողները (%)

ում՞ հետ են մեկնելու	**%**
մենակ	28.2
ամուսնու/կնոջ հետ	36.3
երեխաների հետ	29.8
ծնողների հետ	3.2
եղբոր/քրոջ հետ	1.6
հրաժ. են պատ.	0.9
ԸՆԴԱՄԵՆԸ	100.0

Հետազոտությունը հնարավորություն տվեց պարզելու, թե որ բնակավայրից է (քաղաք, գյուղ) մեծ արտագաղթելու հավանականությունը: Ըստ հետազոտության արդյունքների՝ արտագաղթելու հավանականությունն ավելի բարձր է Երևանից՝ 44.4%, ապա գյուղերից՝ 36.4%: Մարզային քաղաքների դեպքում միջինից ցածր ցուցանիշ է արձանագրվել՝ 19.2%:

Աղյուսակ 13.
Հավանական արտագաղթողների բնակավայրի տիպը (%)

բնակավայրի տիպը	**%**
Երևան	44.4
այլ քաղաք	19.2
գյուղ	36.4
ԸՆԴԱՄԵՆԸ	100.0

Հարցման մասնակիցներին հնարավորություն էր տրված գնահատելու նաև իրենց տնտեսական վիճակը և այդ գործոնի կապը արտագաղթի մտադրությունների հետ: Դրանից պարզ է դառնում, որ հավանական արտագաղթողների մի մասը՝ 13,1%-ը, իր տնտեսական վիճակը գնահատել է «շատ վատ» և «վատ»: Այդ ցուցանիշը արտագաղթել չցանկացողների շրջանում ավելի ցածր է՝ 7,8%: Աղյուսակ 14-ի տվյալներից պարզ է դառնում, որ արտագաղթի ցանկություն ունեցողների 20.2%-ը նյութապես ապավովված է և իր տնտեսական վիճակը գնահատել է «լավ» և« շատ լավ»: Արտագաղթել չցանկացողների շրջանում այն համեմատաբար կազմել է 16,6 %: Այս ցուցանիշները հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ Հայաստանից արտագաղթել ցանկացողների մի մասը պատկանում է հարուստ, իսկ մյուսը՝ աղքատ շերտին:

Աղյուսակ 14.
Հավանական արտագաղթողների և չարտագաղթողների տնտեսական վիճակը (%)

գնահատականը	**հավանական արտագաղթողների տնտեսական վիճակը**	**չարտագաղթողների տնտեսական վիճակը**
շատ վատ	3.0	0.9
վատ	10.1	6.9
միջին	66.7	75.6
լավ	18.2	16.2
շատ լավ	2.0	0.4
ԸՆԴԱՄԵՆԸ	100.0	100.0

Արտագաղթի խթանմանը նպաստում է նաև լեզուների իմացությունը: Մեր հետազոտությունը ցույց տվեց, որ արտերկիր մեկնողների 97,0%-ը ընդհանուր առմամբ տիրապետում է ռուսերենին (միջին՝ 25.3%, լավ՝ 50.5%, գերազանց՝ 21.2%, չի տիրապետում՝ 3,0), իսկ 51,5%-ը՝ անգլերենին (վատ՝ 16,2%, միջին՝ 30,2%, լավ՝ 16,2%, գերազանց՝ 5,1%, չի տիրապետում՝ 32,3%):

Աղյուսակ 15.
Հավանական արտագաղթողների լեզվական իմացությունը (%)

լեզուների իմացությունը	**ռուսերեն**	**անգլերեն**
չեն տիրապետում	3.0	32.3
վատ	0.0	16.2
միջին	25.3	30.2
լավ	50.5	16.2
գերազանց	21.2	5.1
ԸՆԴԱՄԵՆԸ	100.0	100.0

Լեզուների իմացությունը համադրելով նախընտրելի երկրի հետ՝ պարզ է դառնում, որ, օրինակ, ռուսերենին տիրապետում են բոլոր հավանական արտագաղթողները և, ելնելով դրանից, երկրների ընտրության հարցում նրանք չունեն կոնկրետ նախապատվություն (աղ. 16):

Աղյուսակ 16.
Ռուսաց լեզվի տիրապետողների թիվը՝ ըստ երկրների (%)

Ռուսերենի իմացություն	**Ո՞ր երկիր կտեղափոխվեք**					
	Ռուսաստան	**ԱՊՀ երկրներ**	**Եվրոպական երկրներ**	**ԱՄՆ և Կանադա**	**այլ երկրներ**	**դժվարանում եմ պատասխանել**
չեմ տիրապետում	4.3	0.0	7.1	0.0	0.0	0.0
միջին	28.3	0.0	35.7	17.9	0.0	28.6
լավ	50.0	66.7	35.7	57.1	100.0	42.9
գերազանց	17.4	33.3	21.4	25.0	0.0	28.6
ԸՆԴԱՄԵՆԸ	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0

Հետազոտության արդյունքներով՝ իրավիճակը այլ է անգլերենի իմացության և, դրանով նաև պայմանավորված, երկրի ընտրության նախապատվության հարցում: Ի տարբերություն Ռուսաստանի և ԱՊՀ երկրներ տեղափոխվողների, որոնց համապատասխանաբար 47,8% և 33%-ը չի տիրապետում անգլերենին, Եվրոպական երկրներ և ԱՄՆ ու Կանադա մտադրություն ունեցողների շրջանում այդ ցուցանիշը ավելի փոքր է՝ 21,4% և 17,9% (աղ. 17):

Աղյուսակ 17.
Անգլերեն լեզվի տիրապետողների թիվը՝ ըստ երկրների (%)

անգլերենի իմացություն	ո՞ր երկիր կտեղափոխվեք					
	Ռուսաստան	ԱՊՀ երկրներ	Եվրոպական երկրներ	ԱՄՆ և Կանադա	այլ երկրներ	դժվարանում եմ պատասխանել
չեմ տիրապետում	47.8	33.3	21.4	17.9	0.0	14.3
վատ	15.2	0.0	21.4	10.7	100.0	28.6
միջին	23.9	66.7	28.6	39.3	0.0	28.6
լավ	8.7	0.0	28.6	25.0	0.0	14.3
գերազանց	4.3	0.0	0.0	7.1	0.0	14.3
ԸՆԴԱՄԵՆԸ	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0

Եզրակացություն

Հետազոտությունը հնարավորություն տվեց կատարելու այն եզրակացությունը, որ 2023 թ. և դրանից հետո Հայաստանից հավանական արտագաղթը պայմանավորված է տնտեսական պատճառով, և այդ հարցում շարունակում են արտագաղթի գործոն մնալ Հայաստանում բավարար կենսամակարդակ ապահովելու համար միջոցներ վաստակելու անհնարինությունը և աշխատանքի բացակայությունը: Հարցման մասնակիցների մի մասը Հայաստանից հեռանալու կարևոր պատճառ է համարել երկրում ստեղծված քաղաքական անկայուն իրավիճակը, պատերազմի վտանգը, զարգացման հեռանկարների բացակայությունը, սոցիալական, բարոյահոգեբանական մթնոլորտը: Հետազոտությունը հնարավորություն տվեց պատասխանելու այն հարցին, թե ինչ սոցիալ-ժողովրդագրական բնութագիր ունեն Հայաստանից հնարավոր մեկնողները, ըստ որի՝ նրանց հիմնական մասը երիտասարդներ են, ակտիվ վերարտադրողական խմբում են, ունեն բարձրագույն կրթություն, ներգրավված են տնտեսության տարբեր ոլորտներում և մեկնելու են ընտանիքով: Այդ գործընթացի իրականացման դեպքում այն իր բացասական ազդեցությունը կարող է թողնել Հայաստանի բնակչության ժողովրդագրական գործընթացների վատթարացման վրա: Միգրանտների առաջիկա հնարավոր արտագաղթի նախընտրելի երկրների շարքում առաջին հերթին Ռուսաստանի Դաշնությունն է, այնուհետև դրան հաջորդում են ԱՄՆ-ն և Կանադան, ապա եվրոպական երկրները: Ըստ հետազոտության արդյունքների՝ այդ երկրների ընտրությունը առաջին հերթին պայմանավորված է այնտեղ ձևավորված էթնիկ ցանցի՝ ազգակիցների, բարեկամների, ընկերների առկայությամբ, որոնք աջակցում են Հայաստանից նրանց տեղափոխման ծախսերի կրճատման, արտերկրում մարդկային և ֆինանսական ռեսուրսների տրամադրման, անվտանգային խնդիրների, ադապտացիայի և այլ հարցերում: Այս առումով վերանայման և

համակողմանի քննարկման կարիք ունի Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում սփյուռքի դերի խնդիրը, որտեղ միշտ շեշտադրվում են նրա ունեցած տնտեսական և քաղաքական ներդրումները: Մինչդեռ սփյուռքի գոյությունը միգրացիոն ցանցի միջոցով հնարավորություններ է ստեղծում ծագման երկրներից նոր արտագաղթի խթանմանը, ինչը մնում է դեռևս քիչ ուսումնասիրված թեմա:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԵԳՄՆՅԱՆ 2020
Եգանյան Գ.Կ., Միգրացիոն իրավիճակը և բնակչության տեղաշարժերի կառավարման ռազմավարությունները ՀՀ-ում // Բանբեր Երևանի համալսարանի (տնտեսագիտություն) գիտական հանդես, 2020, N 3 (33), 52-66:

BOURDIEU 1985
Bourdieu P., The Forms of Capital // Handbook of Theory and Research for the Sociology of Education, edited by J. G. Richardson, New York: Greenwood Press, 1985, 241-258.

EVERETT 1966
Everett S. Lee A, Theory of Migration // Demography, Vol. 3, No. 1, 1966, 47-57.

FAWCETT 1989
Fawcett, J.T. , Networks, linkages, and migration systems // International migration review, 1989, 23 (3), 671-680.

MASSEY et al. 1993
Massey D., Joaquin Arango J., Hugo G., Kouaouci A., Pellegrino A., Edward T., Theories of International Migration: A Review and Appraisal // Population and Development Review, 1993, vol. 19, No. 3, 431-466.

PORTES 1998
Portes A., Social Capital: Its Origins and Applications in Modern Sociology // Annual Review of Sociology, 1998, 24 (1), 1-24.

SMITH 1986
Smith A.D., The Ethnic Origins of Nations. Oxford, 1986, 32 p.:

Mihran V. Galstyan

Dr. Habil., Associate professor

TO STAY OR TO LEAVE? EXPLORING THE SOCIO-CULTURAL ISSUE OF POTENTIAL EMIGRATION FROM ARMENIA

Keywords: Emigration, socio-cultural reasons, gender, age, education, satisfaction.

The issue of emigration from Armenia, in terms of its causes, security implications, economic aspects, and demographic consequences, stands as a thoroughly examined subject in academic literature. Both Armenian and Western scholars primarily examine this issue through the lens of economic factors encompassing “retaining”, “push” and “pull” factors within sending and receiving countries.

This article delves into the discourse surrounding the socio-cultural factors that underlie emigration. By doing so, it aims to reevaluate and potentially reshape existing paradigms. Recognizing the importance of understanding socio-cultural and psychological triggers behind emigration for identification and prediction, this article draws upon cultural theories on migration from Western sociology. Within this context, we emphasize the concept of

cumulative causality, which posits that each instance of migration increases the likelihood of attracting new migrants and cultivating migration traditions within communities. We also explore social network theories. Drawing upon research findings, we analyze the viewpoints of survey participants concerning their satisfaction with legal, security, self-realization, educational, and social institutions within Armenia, as well as their aspirations for the future. These factors play a pivotal role in shaping the reasons for potential future emigration. To address the question, "Are you currently considering relocating abroad for residential purposes?" we categorize the responses of those interested in leaving Armenia based on gender, age, education, language proficiency, financial well-being, family status, social networks, preferred destination countries, intent to emigrate with family or alone, anticipated departure dates, and current place of residence (urban or rural). This analysis facilitates the identification of potential migrants and specific groups within Armenia's population harboring aspirations to emigrate.

The article is based on the data collected in 2021 through surveys conducted among 639 households in 20 urban and 37 rural settlements across all regions of Armenia, which provided information on 1,259 migrants settled abroad. Additionally, 29 experts were consulted. To provide updated context, in 2023, 13 in-depth interviews were conducted.

Мигран Вардгесович Галстян

д.и.н., доцент

ОСТАТЬСЯ ИЛИ УЕХАТЬ? О СОЦИОКУЛЬТУРНОЙ ПРОБЛЕМЕ ВОЗМОЖНОЙ НОВОЙ ЭМИГРАЦИИ ИЗ АРМЕНИИ

Ключевые слова: эмиграция, социокультурные причины, пол, возраст, образование, удовлетворенность.

Проблема эмиграции из Армении, ее причин, экономического, демографическоговоздействия и безопасности - одна из достаточно изученных тем в научной литературе. Иармянские, и зарубежные ученые исследуют эту проблему в основном в рамках теории“удержания”, “отталкивания” и “притяжения” экономических факторов, существующих вотправляющих и принимающих странах. В данной статье основной акцент посвященсоциокультурной проблеме, вызывающей эмиграцию. Работа даст возможность пересмотреть и изменить существующие ранее подходы, поскольку для выявления и дальнейшего прогнозирования новой миграции важное место в ней отведено анализу социокультурных и психологических факторов, вызывающих это явление, при этом с учетом культурных теорий западной социологии о происхождении миграции.

Особую важность приобретает проблема кумулятивной причинно-следственной связи, поскольку каждый случай миграции увеличивает вероятность привлечения новых мигрантов и формирования традиций миграции в общине и социальных сетей. В рамках этих подходов на основе результатов исследования среди причин новой возможной миграции проанализированы позиции участников опроса относительно удовлетворенности правовыми, образовательными, социальными институтами, институтами безопасности и самореализации, созданными в Армении, и отношение к будущему.

На вопрос “Собираетесь ли вы в настоящее время выехать за границу на жительство?” ответы желающих покинуть Армению сгруппированы по полу, возрасту, образованию, семейному положению, уровню владения языком, материальной удовлетворен-

ности, социальным сетям, желанию покинуть страну с семьей или в одиночку, по предпочитаемым странам, предполагаемым датам отъезда, типу проживания (город, село). Этот анализ дает возможность выявить потенциальных мигрантов и потенциальные группы желающих покинуть Армению.

Статья основана на этносоциологических опросах, проведенных среди 639 домохозяйств в 20 городских и 37 сельских населенных пунктах всех регионов Армении в 2021 году, в результате которых были получены данные о 1259 мигрантах, обосновавшихся за рубежом, и материалах 29 экспертных опросов. Для получения сравнительных материалов в 2023 г. было проведено 13 углубленных интервью.

Ներկայացվել է՝ 09.02.2024
գրախոսվել է՝ 06.08.2024
ընդունվել է տպագրության՝ 30.09.2024

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

Աբրահամյան Հասմիկ Աբելի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
hasmikabrahamyanihasce@gmail.com

Աթանեսյան Գարիկ Հրահատի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
atanesyangarik@gmail.com

Անգելուշ Լուսինե Միքայելի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի ավագ լաբորանտ
lusineangelush@gmail.com

Ասատրյան Հռիփսիմե Գարիկի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանագիտության բաժնի գիտաշխատող
hripetnos@mail.ru

Բարսեղյան Սյուզաննա Սոսի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
syuzanna.barseghyan@gmail.com

Գալստյան Միհրան Վարդգեսի
պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող
akoonk@yahoo.com

Գալստյան Նարե Միհրանի
Սոցիոլոգիական գիտությունների թեկնածու
ԱՄՆ Սիրակուզայի համալսարանի Բերթոն Բլատի ինստիտուտի ավագ հետազոտող
nare.galstyan@gmail.com

Խաչատուրյան Նելլի Ռաֆիկի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի գիտաշխատող
nelli.khachaturyan02@gmail.com

Կարապետյան Ռուբեն Սուրենի
պատմական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող
karapetyan.ruben.s@gmail.com

Հակոբյան Գայանե Լևոնի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
gayik20@gmail.com

Հարությունյան Մարիամ Բագրատի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ լաբորանտ
mariam-harutyunyan-00@mail.ru

Հովսեփյան Ռոման Աղասու
կենսաբանական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Հնակենսաբանության և էթնոկենսաբանության գ/հ խմբի ղեկավար
roman.hovsepyan@iae.am

Մարկոսյան Սալվինե Հակոբի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի կրտսեր գիտաշխատող
salvi.markosyan@gmail.com

Ներսիսյան Սոնա Արայիկի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
sona.nersisyan2006@gmail.com

Պողոսյան Սվետլանա Հայկի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Մշակութային մարդաբանության բաժնի ավագ գիտաշխատող / Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի փոխտնօրեն
svethnomuseum@yahoo.com

Վարդանյան Մակիչ Աշոտի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի ավագ լաբորանտ
makich1639@gmail.com

Տանաջյան Լուսինե Ասատուրի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
lusine.tanajyan@gmail.com

Տիգրանյան Արմինե Հարությունի
ԵՊՀ Մշակութաբանության ամբիոնի դասախոս
armine.tigranyan@ysu.am

Օհանջանյան Ռուբեն Սամվելի
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
r.ohanjanyan@mail.ru

CONTENTS

I. GLOBALIZATION AND MIGRATION PROCESSES

Mihran Galstyan
To stay or to leave? Exploring the socio-cultural issue of potential emigration from Armenia 8

Lusine Tanajyan
The experience of integration of ethnic Armenian and non-Armenian immigrants in Armenia: comparative aspects 24

Sona Nersisyan
Armenia in the perceptions of Russian immigrants 37

Syuzanna Barseghyan
Main issues of armenia's repatriation policy in the context of contemporary realities 49

II. IMMIGRANTS AND DISPLACED PEOPLE. THE SOCIAL-CULTURAL LANDSCAPE OF ARMENIA

Gayane Hakobyan
"Aleppo market" as a micro-model of the entrepreneurial activity of Syrian-Armenians 66

Garik Atanesyan
Authencity discurse and staged heritage in post-Soviet Armenian tourism practices 78

Armine Tigranyan
Restrictions on participation in the cultural life of violently displaced Armenians by Azerbaijan: the example of Artsakh's Hadrut region 89

III. EDUCATION AND GLOBALIZATION

Ruben Ohanjanyan
Some issues of changing trends in professional cultural values in the context of globalization in the Republic of Armenia 114

Lusine Angelush
Language policy of the Republic of Armenia in modern conditions 124

Makich Vardanyan
Globalization discourse in the Armenian mass media: the context of educational problem 139

IV. TRADITIONAL AND MODERN FACTORS IN SOCIAL-CULTURAL TRANSFORMATIONS

Svetlana Poghosyan
Clothing as a socio-psychological indicator of Soviet- and post-Soviet Armenian society 158

Hasmik Abrahamyan
Roman Hovsepyan
The ethno-cultural role of food in the cyrcle of migration (preliminary study based on the materials recorded in Syunik region, Armenia) 174

V. DIASPORA ISSUES

Ruben Karapetyan
The problem of involving Armenians in the community structures of the Diaspora 190

Nare Galstyan
Perceptions of homeland in the armeniam community of Los Angeles 204

Nelli Khachaturyan
Salvine Markosyan
Mariam Harutyunyan
Ethnoreligious reconversion in the context of globalization (the experience of the Indian, Turkish and Irish diasporas) 218

VI. REPORT

Hripsime Asatryan
Some modern manifestations of children's folklore 238

VII. REVIEW 248

INFORMATION ABOUT AUTHORS 263

СОДЕРЖАНИЕ

I. ГЛОБАЛИЗАЦИЯ И МИГРАЦИОННЫЕ ПРОЦЕССЫ

Мигран Галстян
Остаться или уехать? О социокультурной проблеме возможной новой эмиграции из Армении 8

Лусине Танаджян
Опыт интеграции иммигрантов-армян и иммигрантов других национальностей в Армении: сравнительные аспекты 24

Сона Нерсисян
Армения в восприятиях российских иммигрантов 37

Сюзанна Барсегян
Основные проблемы политики репатриации Армении в контексте современных реалий 49

II. ИММИГРАНТЫ И ПЕРЕМЕЩЕННЫЕ ЛИЦА. СОЦИАЛЬНО-КУЛЬТУРНЫЙ ЛАНДШАФТ АРМЕНИИ

Гаяне Акопян
“Рынок Алеппо” как микромодель предпринимательской деятельности сирийских армян 66

Гарик Атанесян
Дискурс аутентичности и постановочное наследие в постсоветской армянской туристической практике 78

Армине Тигранян
Ограничения на участие в культурной жизни насильственно перемещенных армян из Арцаха Азербайджаном: пример Гадрута 89

III. ОБРАЗОВАНИЕ И ГЛОБАЛИЗАЦИЯ

Рубен Оганджанян
Некоторые вопросы тенденций изменения профессиональных культурных ценностей в условиях глобализации в Республике Армения 114

Лусине Ангелуш
Языковая политика Республики Армения в современных условиях 124

Макич Варданян
Дискурс глобализации в армянских СМИ: контекст проблемы образования 139

IV. ТРАДИЦИОННОЕ И СОВРЕМЕННОЕ В СОЦИАЛЬНО-КУЛЬТУРНЫХ ТРАНСФОРМАЦИЯХ

Светлана Погосян
Одежда как социально-психологический показатель советско- и пост-советско-армянского общества 158

Асмик Абрамян
Роман Овсепян
Этнокультурная роль пищи в круговороте миграции (по материалам Сюникской области) 174

V. ПРОБЛЕМЫ ДИАСПОРЫ

Рубен Карапетян
Проблема вовлечения армян в общинные структуры Диаспоры 190

Наре Галстян
Представления о родине в армянской общине Лос-Анджелеса 204

Нелли Хачатурян
Сальвине Маркосян
Мариам Арутюнян
Этнорелигиозная реконверсия в условиях глобализации (на опыте индийской, турецкой и ирландской диаспор) 218

VI. СООБЩЕНИЕ

Рипсиме Асатрян
Некоторые современные проявления детского фольклора 238

VII. РЕЦЕНЗИЯ 248

СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ 263

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
6

անգլերենի խմբագիրներ՝	Գարիկ Աթանեսյան Արման Խաչատյան
ռուսերենի խմբագիրներ՝	Լիլյա Վարդանյան Լուսինե Անգելուշ
հայերենի խմբագիր՝	Սեդա Քուփելյան
ձևավորում և էջադրում՝	Արտակ Հարությունյան

Տպագրվել է «Արփինե Բեգլարյան» ԱՁ տպարանում
հեռ. 043 107 090
Beglaryanprint@mail.ru

ՀԱԻԱ 6